ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, հայ մեծանուն դերասան Միեր Մկրտչյանի արձանի տեղադրմանը Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 6-րդ շենքի հանդիպակաց մայթին հարող կանաչ տարածքում՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի ---------- ---ի
N--- Ա որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր Միեր Մկրտչյանի ծննդյան 95-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակներում առաջարկվում է Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 6-րդ շենքի հանդիպակաց մայթին հարող կանաչ տարածքում տեղադրել հայ մեծանուն դերասանի արձանը, որի հեղինակներն են վաստակավոր նկարիչ-քանդակագործ Տիգրան Արզումանյանը և վաստակավոր ճարտարապետ Աշոտ Ալեքսանյանը:

Արձանը նախատեսվում է տեղադրել 2025 թվականին, որի իրականացման և տեղադրման հետ կապված ծախսերը կհոգա Ներսեսյան ընտանիքը:

Միեր Մկրտչյանը ծնվել է 1930 թվականին Գյումրիում: Սովորել է Գյումրիի նկարչական ու երաժշտական դպրոցներում, միաժամանակ հաճախել է թատերական ինքնագործ խմբակ: 1945-1946 թվականներին սովորել է Մռավյանի անվան թանտրոնին կից ստուդիայում: Ավարտելուց հետո՝ 1947 թվականին, ընդգրկվել է նույն թատրոնի հիմնական խմբի մեջ: 1951-1956 թվականներին սովորել է Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտում:

Միեր Մկրտչյան դերասանի բարձր վարպետության ապացույցն են «01-99», «Նվագախմբի տղաները», «Եռանկյունի», «Մենք ենք, մեր սարերը, «Հայրիկ», «Նահապետ», «Կտոր մը երկինք», «Խաթաբալա», «Հին օրերի երգը», «Կովկասի գերուհին», «Միմինո», «Այբոլիտ-66» և բազմաթիվ այլ ֆիլմերում խաղացված դերակատարումները, որոնք գնահատվեցին պետական բարձրագույն պարգևներով:

1986 թ. Միեր Մկրտչյանի ջանքերով ստեղծվել է Երևանի քաղաքապետարանի Վ. Աճեմյանի անվան արտիստական թատրոնը:

Միեր Մկրտչյանը մահացել է 1993 թվականին, 63 տարեկան հասակում:

Կարևորելով Միեր Մկրտչյանի հիշատակը վառ պահելու, ապագա սերունդներին փոխանցելու, ինչպես նաև անվանի արվեստագետների գործունեությունն ու երախտիքը պատշաճ գնահատելու և ներկայացնելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է տալ համաձայնություն Միեր Մկրտչյանի արձանի տեղադրմանը և ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ